ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ - ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՔԱՏ և ԿԱՐԻՔԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ TF 013894

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ Ճարտարագիտական նախագծերի և նախահաշիվների պատրաստում հանրային կառույցների վերամոդելավորում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը հեշտացնելու համար եւ հաշմանդամների ռեսուրս կենտրոնների վերակառուցում, վերամոդելավորում եւ հեղինակային հսկողություն

Հղման թվակիր համարը /ըստ Գնումների պլանի/՝ **SLVPVP C** -3.3.2

Առաքելություն Հայաստան Բարեգործական Հասարակական կազմակերպությունը իրականացնում է Հայաստանում աղքատ եւ կարիքավոր անձանց կենսամիջոցների բարելավում ծրագիրը: Ծրագրի նպատակն է Երևանի և Հայաստանի հինգ այլ մարզերի՝ Կոտայքի, Արարատի, Լոռու, Գեղարքունիքի և Շիրակի թիրախ համայքների չորս հազար անապահով և աղքատ մարդկանց, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ընձեռել ինքնաբավ կենսապայմանների և զբաղվածության հնարավորություններ, ինչպես նաև նրանց մատուցել կենսականորեն անհրաժեշտ ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնաբավ կենսապայմանների եւ զբաղվածության հնարավորությունների ընձեռնման համար ծրագրի 3.3-րդ ենթաբաղադրիչի նպատակն է ստեղծել ներառական միջավայր հաշմանդամություն ունեցող անձանց համար եւ զարգացնել իրենց շահերը ինքնուրույն պաշտպանելու կարողությունը: Սակավաշարժուն շահառուների համար հասարակական կարևոր օբյեկտների մուտքերի բարեհարմարեցումը, ինչպես նաև ծրագրի կենտրոններում ներառական միջավայր ստեղծելու միջոցառումները կնպաստեն նրանց անարգել տեղաշարժմանը:

Ծրագրի նպատակն է՝

Ծրագրով նախատեսվում է վերակառուցման աշխատանքներ և ըստ պահանջի շինվերանորոգման աշխատանքներ իրականացնել Հանրային կառույցներում և Ռեսուրս կենտրոններում:

Այս աշխատանքները կատարելու համար կընտրվի նախագծային կազմակերպություն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև շինվերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացման համար:
Ծառայությունները կիրականացվեն 2 փուլով.
1. Նախագծի պատրաստման փուլ, որի կատարման ժամանակահատվածն է մոտավորապես 4 ամիս է:
2. Հեղինակային հսկողության փուլ, որը կմեկնարկի նախագծով նախատեսված վերակառուցման եւ պահանջի դեպքում՝ շինվերանորոգման գործունեություն սկսելու օրվանից մինչեւ նախագիծը շահագործման համար հանձնելու օրը:

«Առաքելություն Հայաստան»-ը վերոնշյալ պահանջներին համապատասխանող Խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ») հրավիրում է ներկայացնելու Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումները և համապատասխան փորձ:

Կարճ ցուցակ ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Առաջադրանքի ոլորտում խորհրդատվական ընկերության ընդհանուր փորձը (տարի),
- Խորհրդատուն պետք է ունենա հանրային կառույցների նախագծման նվազագույնը 5 տարվա փորձ եւ ունենա բոլոր պահանջվող թույլտվություններն ու հավաստագրերը եւ գործի ՀՀ օրենսդրության համաձայն (Խորհրդատուն պետք է ներկայացնի փաստաթղթեր, որոնք կհավաստեն, որ խորհրդատուն ունի հաջողությամբ նմանատիպ 3 համաձայնագրի իրականացման փորձառություն 2008-2013թթ.-ին (օր. հաջողությամբ իրականացրած նմանատիպ բնույթի նախագծեր՝ նշելով Պատվիրատուին, պայմանագրի գինը եւ իրականացրած ծառայությունները)):
- Աշխատանքային փորձ միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերում:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի ՀԲ-ի Խորհրդատուների Ուղեցույցներում սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչեւ 2014 թ.-ի ապրիլի 22-ը, ժամը 18:00:

Հռիփսիմե Կիրակոսյան
«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի նախագահ
Գ. Նժդեհ 42, Երեւան, 0026, Հայաստանի Հանրապետություն
Էլ-փոստ՝ org@ngo.mission.am
Հեռ/ Ֆաքս (+374 10) 444-792